

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հասարակական արտադրության արդյունաբերության ցուցանիշների համակարգում կարևորագույններից մեկն է համարվում պետության արտաքին առևտրական գործունեության արդյունավետությունը, նրա ազդեցությունը պետության տնտեսության ընդհանուր արդյունավետության վրա ամբողջությամբ վերցրած:

Տարբեր հաշվարկների և վերլուծությունների կիրառումը հնարավորություն է տալիս որոշել ներմուծման և արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Այս առումով կարևոր նշանակություն ունի արտաքին առևտրի գների վիճակագրությունը: Ներմուծման և արտահանման ապրանքների գների մակարդակի և դինամիկայի ուսումնասիրման համար կիրառվում է ինդեքսային մեթոդը: Արտաքին առևտրի բնագավառում կարևոր ցուցանիշներ են արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսը, ֆիզիկական ծավալի ինդեքսը և արտաքին առևտրի պայմանների ինդեքսը:

Արտաքին առևտրի գների ինդեքսը բնութագրում է արտաքին առևտրի գների փոփոխման հաշվին արտահանման և ներմուծման արժեքի փոփոխությունը անփոփոխ, հաստատուն ֆիզիկական ծավալի պայմաններում:

Ներմուծվող և արտահանվող ապրանքների տարաբնույթ նկարագիրը թույլ չի տալիս ստանալ արտաքին առևտրի ֆիզիկական ծավալի դինամիկայի մասին համընդհանուր պատկեր, ինչը կարելի է չափել միայն ֆիզիկական ծավալի ինդեքսի օգնությամբ: Այն բնութագրում է ներմուծման և արտահանման ծավալների փոփոխությունը՝ հաշվարկված միջին գների ինդեքսի հիման վրա: Ֆիզիկական ծավալի ինդեքսի հաշվարկի կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ հաշվարկը կատարվում է ոչ թե գների հատուկ դիտարկման օգնությամբ, այլ ապրանքի մեկ միավորի միջին արժեքի հիման վրա:

Պետության արտաքին առևտրի զարգացման ավելի խորը տնտեսական վերլուծության համար հաշվարկվում է արտաքին առևտրի պայմանների ինդեքս, ինչն արտահանման միջին գների ինդեքսի հարաբերությունն է ներմուծման միջին գների ինդեքսին և բնորոշում է արտաքին առևտրից ստացված վնասը կամ օգուտը:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵԼՔԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ

Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսների հաշվարկի համար որպես տվյալների սկզբնական աղբյուր հիմք են հանդիսանում ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերը (դեկլարացիաները): ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կողմից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը (վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնին) յուրաքանչյուր ամիս տրամադրվում է տեղեկատվություն ՀՀ արտաքին առևտրի ծավալների մասին: Ստացված սկզբնական տվյալների գաղտնիությունն ապահովելու համար մշակվում է արտաքին առևտրի ներմուծման (արտահանման) գների ինդեքսների

հետագա հաշվարկի համար տվյալների հատուկ բազա: Հաշվարկներին մասնակցող ընտրված ապրանքներին են վերաբերվում այն բոլոր միատարր ապրանքատեսակները, որոնք՝

- ծածկագրված են ըստ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳԱԱ) դասակարգչի ութանիշ կոդերի,
- դասակարգված են՝
 - ըստ 1339 ապրանքային ենթախմբերի,
 - ըստ 97 ապրանքային խմբերի,
 - ըստ 21 ապրանքային բաժինների,
- ունեն ապրանքի քանակի և արժեքի մասին տվյալներ,
- պարունակում են տեղեկատվություն տվյալ ապրանքն արտահանող կամ ներմուծող երկրի մասին:

Ապրանքների գնային ցուցանիշները ստացվում են բեռնամաքսային հայտարարագրերի հիման վրա: Սակայն դրանց ամենաբարձր դետալացման (մանրամասնելու) դեպքում էլ երկու կամ մի քանի որակապես տարբեր ապրանքներ դասակարգվում են միևնույն ութանիշ ծածկագրով: Քանի որ միավորի արժեքի ինդեքսն ընդունակ չէ ամբողջությամբ արտահայտելու ապրանքի որակական փոփոխությունը, առաջ են գալիս գնային մեծ տատանումներ: Գնային այդպիսի փոփոխությունները, կապված ապրանքի որակական հատկանիշների փոփոխությունների հետ (ոչ միատարրության պատճառով), բերում են արտաքին առևտրի գների ինդեքսների որոշակի արհեստական շեղման: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում ծայրահեղ գնային փոփոխություններով ապրանքները դուրս թողնել ինդեքսների հաշվարկից:

3. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Արտաքին առևտրի գների ինդեքսների հաշվարկը տարվում է՝

1. 4 ուղղություններով՝

- ◆ «Ըստ բոլոր երկրների»,
- ◆ «Ըստ ԱՊՀ երկրների»,
- ◆ «Ըստ ոչ ԱՊՀ երկրների»,
- ◆ «Ըստ Եվրամիության երկրների»:

2. յուրաքանչյուր ուղղությունը հետևյալ կտրվածքներով՝

- ըստ ապրանքատեսակների,
- ըստ ապրանքային ենթախմբերի,
- ըստ ապրանքային խմբերի,
- ըստ բաժինների,
- ընդամենը:

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկի համար կիրառվում է Լասպեյրեսի միջին արժեքի ինդեքսի բանաձևը: Դա թույլ է տալիս համադրել ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի հետ: Միավորի արժեքի գինը կշռվում է բազիսային ժամանակաշրջանի առևտրային հոսքերով, որոնք կարող են տարեցտարի զգալի տատանվել, կորցնել արդիականությունը և նպաստել գների ինդեքսների արհեստական աճին: Ուստի, այնպիսի բնագավառում ինչպիսին արտաքին առևտուրն է, նպատակահարմար է բազիսային ժամանակաշրջանն ընդունել նախորդ տարին:

«Ըստ ԱՊՀ երկրների», «ըստ ոչ ԱՊՀ երկրների» և «ըստ Եվրամիության երկրների» ուղղություններում յուրաքանչյուր ապրանքատեսակի տեսակարար կշիռն իր ապրանքային ենթախմբի մեջ որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{io} = \frac{\overline{P_{io}} * Q_{io}}{\sum_{i=1}^n \overline{P_{io}} * Q_{io}} * 100,$$

որտեղ՝ W_{io} – i-րդ ապրանքի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում,

$\overline{P_{io}}$ – i-րդ ապրանքի մեկ միավորի միջին արժեքն է բազիսային ժամանակաշրջանում,

Q_{io} – i-րդ ապրանքի քանակն է բազիսային ժամանակաշրջանում:

Յուրաքանչյուր ապրանքային ենթախմբի, խմբի և բաժնի տեսակարար կշիռը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_L = \frac{V_L}{\sum V_L} * 100,$$

որտեղ՝ W_L – ապրանքային ենթախմբի (խմբի, բաժնի) տեսակարար կշիռն է իր խմբի (բաժնի, ՀՀ-ի) մեջ:

V_L – ապրանքային ենթախմբի (խմբի, բաժնի) ծավալն է իր խմբի (բաժնի, ՀՀ-ի) մեջ:

ՀՀ-ում արտաքին առևտրի գների ինդեքսը հաշվարկվում է ամսական կտրվածքով:

«Ըստ ԱՊՀ երկրների», «ըստ ոչ ԱՊՀ երկրների» և «ըստ Եվրամիության երկրների» ուղղություններում ինչպես ընթացիկ ամսվա, այնպես էլ բազիսային տարվա համար հաշվարկվում է առանձին ապրանքատեսակների ներմուծման (արտահանման) միջին արժեքը (գինը):

$$\overline{P_i} = \frac{V_i}{Q_i},$$

որտեղ՝ $\overline{P_i}$ – i-րդ ապրանքատեսակի միջին արժեքն է,

V_i – i-րդ ապրանքատեսակի ծավալն է գումարային արտահայտությամբ,

Q_i – i-րդ ապրանքատեսակի քանակն է:

Ստացված միջին արժեքներով (գներով) հաշվարկվում է յուրաքանչյուր ապրանքատեսակի միջին արժեքի ինդեքսը:

$$I_i = \frac{\overline{P_{it}}}{\overline{P_{io}}} * 100,$$

որտեղ՝ I_i – i-րդ ապրանքատեսակի միջին արժեքի ինդեքսն է,

$\overline{P_{it}}$ – i-րդ ապրանքատեսակի միջին արժեքն է ընթացիկ ժամանակաշրջանում,

$\overline{P_{io}}$ – i-րդ ապրանքատեսակի միջին արժեքն է բազիսային ժամանակաշրջանում:

Հաշվարկված արտաքին առևտրի միջին արժեքի ինդեքսների շարքը կարող է լինել խիստ անկանոն ի հաշիվ առանձին ապրանքատեսակների գների կտրուկ տատանումների: Նման կարգի գնային մեծ շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ: Այն ապրանքները, որոնք ունեն հաշվարկված սահմանային գործակիցից ավելի գնային տատանումներ՝

(նվազման կամ աճման միտումով), այսինքն միջին արժեքի փոփոխությունները (ինդեքսները) դուրս են մտնում այդ միջակայքերից, չեն մասնակցում հետագա հաշվարկներին: Այսպիսի սահմանային գործակիցների ընտրությունը հաստատվել է գնային տիպիկ տատանումների (տարբեր միջակայքերում) բազմաթիվ ուսումնասիրություններից հետո: Ինդեքսի սահմանային արժեքները հաստատվում են այնպես, որ ապահովեն գնային փոփոխության ճշգրտության անհրաժեշտ մակարդակը՝ բացառելով անհամադրելի տվյալները և հնարավոր սխալները: Ապրանքների այսպիսի ընտրանքը ապահովում է դրանց անհրաժեշտ ներկայացուցչականությունը, ինչը հնարավորություն է տալիս ավելի հիմնավորված բացահայտել գների ազդեցությունն արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր փոփոխությունների վրա:

Ինդեքսի թույլատրելի վերին և ստորին սահմանները որոշվում են առանձին ապրանքատեսակների գների միջին կշռված քառակուսային շեղումների և դրանց հիման վրա հաշվարկված տատանման (վարիացիոն) գործակիցների օգնությամբ (միջոցով):

Մասնավորապես ՀՀ արտաքին առևտրի յուրաքանչյուր բաժնի՝ ներմուծման, արտահանման համար սահմանային գործակիցների հաշվարկներն իրականացվում են ըստ հետևյալ 3 ուղղությունների՝ «ըստ ԱՊՀ երկրների», «ըստ ոչ ԱՊՀ երկրների» և «ըստ Եվրամիության երկրների», յուրաքանչյուր բազիսային տարվա համար օգտագործելով ապրանքատեսակների 12 ամիսների քանակային, գնային ցուցանիշները, միջին քառակուսային շեղումները, տատանման գործակիցները և դրանց կշռված միջինները:

Հիմք ընդունելով նախորդ (բազիսային) տարվա տվյալները, սահմանային գործակիցները յուրաքանչյուր հաշվետու տարվա համար հաշվարկվում են հետևյալ կարգով.

- հաշվարկվում է ըստ ներմուծման և արտահանման 3 ուղղությունների, առանձին ապրանքատեսակների գների (12 ամիսներով) տատանման գործակիցը հետևյալ բանաձևով.

$$\text{var}_i = \frac{\sigma_i}{x_i} * 100,$$

որտեղ՝ var_i – i -րդ ապրանքատեսակի տատանման գործակիցն է,

x_i – i -րդ ապրանքատեսակի (12 ամիսներով) միջին կշռված գինն է և որոշվում է հետևյալ բանաձևով,

$$\bar{x}_i = \frac{\sum_{k=1}^{12} p_{ik} q_{ik}}{\sum_{k=1}^{12} q_{ik}},$$

որտեղ՝ p_{ik} – բազիսային տարվա k -րդ ամսում i -րդ ապրանքատեսակի գինն է,

q_{ik} – բազիսային տարվա k -րդ ամսում i -րդ ապրանքատեսակի քանակն է,

σ_i – i -րդ ապրանքատեսակի գների միջին կշռված քառակուսային շեղումն է և որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\sigma_i = \sqrt{\frac{\sum_{k=1}^{12} (p_{ik} - \bar{x})^2 q_{ik}}{\sum_{k=1}^{12} q_{ik}}},$$

- հաշվարկվում է միջին կշռված տատանման գործակից՝ ըստ ներմուծման և արտահանման 3 ուղղությունների առանձին ապրանքատեսակների տատանման գործակիցների հետևյալ բանաձևով՝

$$\overline{VAR} = \frac{\sum V_i * var_i}{\sum V_i},$$

որտեղ՝ \overline{VAR} – միջին կշռված տատանման գործակիցն է,

var_i – i-րդ ապրանքատեսակի տատանման գործակիցն է,

V_i – i-րդ ապրանքատեսակի ծավալն է գումարային արտահայտությամբ,

- ինդեքսների շարքի վերին և ստորին սահմանային արժեքները հաստատվում են սահմանափակելով դրանք եռակի ստանդարտ շեղման մեծության միջակայքով և ամեն ամիս անփոփոխ կիրառվում (տարածվում) յուրաքանչյուր ապրանքատեսակի միջին արժեքի ինդեքսի վրա (բաժին 3):

Վերին և ստորին սահմանները, արտահայտված տոկոսներով, որոշվում են հետևյալ բանաձևերով՝

$$\overline{VAR}_{max} = (VAR * k) + 100\%, k=3$$

$$\overline{VAR}_{min} = (100 - \overline{VAR}_{max})\%:$$

Եթե կիրառելի չէ k=3 եռակի ստանդարտ շեղման մեծության միջակայքը, ապա կիրառելի k=2 կամ k=1 ստանդարտ շեղման մեծության միջակայքերից որևէ մեկը, կանխավ կատարելով վիճակագրական (ծրագրում՝ Statistics) և վարիացիոն գործակիցների (ծրագրում՝ CreateVarTables) փորձնական հաշվարկներ:

Յուրաքանչյուր ապրանքային ենթախմբի համար ըստ առանձին ապրանքատեսակների, իրականացվում է ամփոփ միջին կշռված ինդեքսի հաշվարկ: Ստացված ինդեքսը տարածվում է մյուս այն ապրանքատեսակների վրա, որոնք կան բազիսային ժամանակաշրջանում, սակայն բացակայում են հաշվետու ժամանակաշրջանում, ինչի հետևանքով չեն մասնակցում հաշվարկներին: Ապրանքային ենթախմբերի ինդեքսները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$I_E = \frac{\sum_{i=1}^n \frac{\overline{P}_{it}}{\overline{P}_{io}} * W_{io}}{\sum_{i=1}^n W_{io}},$$

որտեղ՝ I_E - յուրաքանչյուր ապրանքային ենթախմբի միջին արժեքի ինդեքսն է,

P_{it} - i-րդ ապրանքի միջին արժեքն (գինն) է ընթացիկ ամսում,

P_{io} - i-րդ ապրանքի բազիսային միջին արժեքն (գինն) է,

W_{io} - i-րդ ապրանքի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:

Օգտագործելով տոկոսային փոփոխությունների փոխկապակցման (ագրեգացման) եղանակը, ապրանքային ենթախմբերի ինդեքսների հիման վրա՝ հաշվարկվում են ապրանքային խմբերի, բաժինների միջին արժեքների ինդեքսներ, ինչպես նաև ներմուծման և արտահանման գների ամփոփ ինդեքսներ «ըստ ԱՊՀ երկրների», «ըստ ոչ ԱՊՀ երկրների» և «ըստ Եվրամիության երկրների» հետևյալ բանաձևով՝

$$I_L = \frac{\sum I_E * W_{Eo}}{\sum_{i=1}^n W_{io}},$$

որտեղ՝ I_L - ապրանքային խմբի (բաժնի, ընդամենը - <<) ներմուծման (արտահանման) միջին արժեքի ինդեքսն է ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

I_E - ապրանքային ենթախմբի (ապրանքային խմբի, բաժնի) ներմուծման (արտահանման) միջին արժեքի ինդեքսն է ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

W_{Eo} - ապրանքային ենթախմբի (ապրանքային խմբի, բաժնի) ներմուծման (արտահանման) տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:

Արտահանման և ներմուծման միջին արժեքի ինդեքսի հաշվարկը «ըստ բոլոր երկրների» ամբողջությամբ վերցրած (ըստ ապրանքատեսակների, ապրանքային ենթախմբերի, ապրանքային խմբերի, բաժինների և ընդամենը՝ <<), իրականացվում է անուղղակի ճանապարհով՝ հիմք ընդունելով հանրապետության ներմուծման (արտահանման) ընդհանուր ծավալում «ըստ ԱՊՀ երկրների» և «ըստ ոչ ԱՊՀ երկրների» ներմուծման (արտահանման) ծավալների կշռվածությունը:

$$I_L = \frac{I_1 * W_1 + I_2 * W_2}{W_1 + W_2},$$

որտեղ՝ I_L - «ըստ բոլոր երկրների» ներմուծման (արտահանման) միջին արժեքի ինդեքսն է,

I_1 - «ըստ ԱՊՀ երկրների» ներմուծման (արտահանման) միջին արժեքի ինդեքսն է՝ հաշվարկված Լասպեյրեսի բանաձևով ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

I_2 - «ըստ ոչ ԱՊՀ երկրների» ներմուծման (արտահանման) միջին արժեքի ինդեքսն է՝ հաշվարկված Լասպեյրեսի բանաձևով ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

W_1 - «ըստ բոլոր երկրների» ներմուծման (արտահանման) ընդհանուր ծավալի մեջ «ըստ ԱՊՀ երկրների» ներմուծման (արտահանման) ծավալի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում,

W_2 - «ըստ բոլոր երկրների» ներմուծման (արտահանման) ընդհանուր ծավալի մեջ «ըստ աշխարհի այլ երկրների» ներմուծման (արտահանման) ծավալի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:

Արտաքին առևտրի գների ինդեքսները «ըստ բոլոր երկրների», «ըստ ԱՊՀ երկրների», «ըստ ոչ ԱՊՀ երկրների» և «Եվրամիության երկրների» ուղղություններով նախորդ ամսվա նկատմամբ (ըստ ապրանքատեսակների, ապրանքային ենթախմբերի, ապրանքային խմբերի, բաժինների և ընդամենը - <<) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$I_{t/(t-1)} = \frac{I_{t/o}}{I_{(t-1)/o}} * 100,$$

- որտեղ՝ $I_{t/t-1}$ – ընթացիկ ամսվա ինդեքսն է նախորդ ամսվա նկատմամբ,
 $I_{t/0}$ – ընթացիկ ամսվա ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,
 $I_{t-1/t}$ – նախորդ ժամանակաշրջանի ինդեքսն է բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ:

Նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ և նախորդ տարվա նկատմամբ (աճողական կարգով) արտաքին առևտրի գների ինդեքսները հաշվարկվում են բազիսային տարվա նկատմամբ ստացված գների ինդեքսների հիման վրա կազմված միջնաժամկետ (երկարաժամկետ) գների ինդեքսների շարքերի միջոցով:

4. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ

Որոշակի ժամանակահատվածում երկրի ներքին առևտրի արդյունքների ամփոփման, ինչպես նաև արտահանումից միջին հասույթի և ներմուծման ծախսերի հարաբերակցությունը պարզելու համար հաշվարկվում են «առևտրի պայմանների» ցուցանիշներ.

$$T_p = \frac{I_{PEx}}{I_{PIm}},$$

- որտեղ՝ T_p – առևտրի գնային պայմաններն են,
 I_{PEx} – արտահանման միջին արժեքի ամփոփ ինդեքսն է՝ ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,
 I_{PIm} – ներմուծման միջին արժեքի ամփոփ ինդեքսն է՝ ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,

$$T_Q = \frac{I_{QEx}}{I_{QIm}},$$

- որտեղ՝ T_Q – առևտրի գնային պայմանների քանակն է,
 I_{QEx} – արտահանման ֆիզիկական ծավալի ինդեքսն է՝ ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ,
 I_{QIm} – ներմուծման ֆիզիկական ծավալի ինդեքսն է՝ ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ:

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Այն մշակելիս հաշվի են առնվել Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից արված առաջարկությունները, միջազգային փորձը և համարվում է ԱՄՀ-ի կողմից առաջարկված նախապատվելի տարբերակներից մեկը:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին